

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԵՎ
ՀՈՒՆԳԱՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVIII–XIX դդ. I կես)

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հունգարիայի և հունգարացիների հետ հայերի ծանոթությունը կայացել է շատ վաղ ժամանակներում: Չնայած երկու երկրների միջև եղած վիթխարի հեռավորությունը, այդ ծանոթությունը եղել է չափազանց սերտ, մոտիկ հարևանների ծանոթություն: Պատմական գեպքերի բերումով հայ ժողովրդի մի գզալի հատվածը հարկադրված է եղել հեռանալ իր հայրենիքից ու հաստատվել մի շարք հեռու և մոտ երկրներում: Հայ գաղթականների մեծ խմբեր տարբեր ճանապարհներով հասել են նաև Հունգարիա և օգտվելով տեղացի ժողովրդի բարյալակամ վերաբերմունքից, հաստատվել են հյուրընկալ այդ երկրում, ստեղծել իրենց փոքրիկ համայնքները, ապրել ազգային ուրույն կյանքով: Հունգարական երկրի իշխողները, հաշվի առնելով հայ ընակչության օգտակար զերն այդ վայրերի տնտեսական զարգացման գործում, բազմաթիվ արտոնություններ են շնորհել նրանց և երկար ժամանակ հունգարական մի շարք քաղաքներում հաստատված հայ բնակիչները վայելել են ներքին ինքնավարության արտոնություն: Մեծ թվով հայեր էին բնակվում նաև հարևան երկրներում՝ Ռումինիայում, Մոլդավիայում, Լեհաստանում և Ուկրաինայում, որոնք տարբեր առիթներով հաճախ դալիս էին Հունգարիա, շվուում տեղացի ժողովրդի և իրենց հայրենակիցների հետ: Հունգարիայի հայերը կաթուղիկություն ընդունելուց հետո սերտ կապերի մեջ էին նաև Վենետիկում և Վիեննայում հաստատված հայ կաթուղիկ համայնքների հետ: Հայ կաթուղիկ հոգևորականները սլաշտոնի բերումով հաճախ այցելում էին Հունգարիա և հաստատվում այդ երկրի հայաշատ կենտրոններում: Թե՛ Հունգարիայում ապրող հայերը և թե՛ այնտեղ եկած նրանց հայրենակիցները լավատեղյակ էին հունգարական գործերին, ծանոթ էին այդ երկրի բնակավայրերին, հունգարացիների նիստուկացին, տնտեսական գրությունն ու քաղաքական կացությունը, հետևապես նրանց թողած գրական ստեղծագործությունները, նամակներն ու զանազան փաստաթղթերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և արժեքավոր են նաև հունգարական երկրի անցյալ կյանքի պատմության մի շարք հարցերի լրացման ու սլարղարանման համար:

Հարկ է նշել, որ Հունգարիայում ստեղծված հայերեն ձեռագրերի մի մասը այդ երկրում տեղի ունեցած քաղաքական դեպքերի հետևանքով կորել կամ ոչնչացել է: Սակայն պահպանվել ու մեղ են հասել այդ նույն վայրերում ստեղծված բազմաթիվ արխիվային վավերագրեր՝ պայմանագրեր, հոգևոր և կտրիճվորաց եղբայրությունների ու համաբարությունների կանոնագրություններ, նամակներ, հարսանեկան պայմանագրեր, որոնց

մեջ տեղեկություններ կան նաև հունդարացիների ու Հունգարիայի վերաբերյալ:

Հունգարիայում ապրող հայերը սլազայանել են և ապա հրապարակել իրենց գաղութների ներքին կյանքին վերաբերող ընդամենի վավերագրեր: Նրանց ենք պարտական Հունգարիայի մի շարք բնակավայրերում, գլխավորապես Պաշտալովում և Գեոլայում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հիշատակության համար, որոնք ինչ-որ չափով օգտակար կլինեն նաև Հունգարիայի պատմությանը գրող մասնագետներին: Հետաքրքրական են նաև այն փաստաթղթերը, որոնց մեջ որոշ տեղեկություններ են պահպանվել նաև այն ժամանակվա ապրանքների գների, ճանապարհածախսի, աշխատավարձի և նման այլ հարցերի վերաբերյալ:

Գոյություն ունի նաև վավերագրերի մի այլ խումբ, որոնք ճիշտ է գրվել են մեծ մասամբ Հունգարիայում, լայն առաքվել են արտասահման, որտեղ և պահվում են մինչ օրս: Խոսքը վերաբերում է Հունգարիայից Վենետիկ քաղաքի սուրբ Ղազար կղզում գեղեկապես XVIII դ. սկզբներից հաստատված հայկական կաթոլիկ Մխիթարյան միաբանության ուղարկված գրություններին: Հեղինակները նույն միաբանության անդամներն են, որոնք, ժամանելով Հունգարիա, մշակական նամակագրական կապ էին պահպանում իրենց միաբանության ղեկավարության հետ և իրենց գրություններում հաճախ ուշադրավ տեղեկություններ հաղորդում Հունգարիայի քաղաքական կյանքի, անտեսական վիճակի, բնական արհավիրքների ու համաճարակների մասին: Այդ նամակները պահվում են այժմ Վենետիկի Մխիթարյան միաբանության արխիվում և մատչելի են դարձել մեզ 1930 թ. կատարված մի հրապարակման շնորհիվ¹:

Վենետիկի Մխիթարյանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Հունգարիայի նկատմամբ և պատահական չէ, որ 1809 թ. այնտեղ հայերեն լեզվով լույս ընծայված համաշխարհային աշխարհագրության հատորներից մեկի ուղիղ կեսը հատկացված է Հունգարիային: Հեղինակը՝ Ստեփանոս Գյուլվեր Ագոնցը, որն այն ժամանակ զբաղեցնում էր միաբանության արքայապետի պաշտոնը, ծնվել ու շատ տարիներ ապրել էր Հունգարիայում, ուստի նրա գրածները հունգարական քաղաքների ու գյուղերի, եկեղեցիների ու վանքերի, սրբատեղիների ու հոգևոր հաստատությունների և, ընդհանրապես, հունգարական կյանքի ու կենցաղի մասին, չափազանց հետաքրքրական են ու արժեքավոր: Հունգարիայի նկատմամբ Մխիթարյանների ունեցած մեծ հետաքրքրության մասին է վկայում նաև Վենետիկում 1812–1816 թթ. հրատարակված «Դիտակ Բյուզանդեան»-ի հայկական հասարակական-քաղաքական պարբերական հանդեսի էջերում Հունգարիայում տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանումը: Իսկ երբ Մխիթարյան միաբանության անդամներից մեկը՝ բանասեր Մինաս Բժշկյանը 1820 թ. շրջագայության գուրս եկավ Արևելյան Եվրոպայի մի քանի երկրներն ու Ռուսաստանի հայկական գաղթավայրերը, այցելեց նաև Հունգարիա և տասը տարի անց Վենետիկում լույս տեսած իր ուղեգրություններում հատուկ ուշադրություն ընծայեց ոչ միայն այդ վայրերում բնակություն

¹ Հ. Ղեկունդ Տայան. Մայր դիվան Մխիթարեանց Վենետիկոյ Ս. Ղազար (1707–1773), ի ծագմանէ ուխտիս մինչև զբաժանումն Թրեստեան հարց. Վենետիկ, 1930:

յուն հաստատած հայերին, այլև թողեց հունգարական մի քանի բնակավայրերի նկարագրությունը:

Ի մի բերելով այդ նյութերը և համառոտ պատկերացում տալով դրանց մասին հույս ունենալ, որ հայկական աղբյուրների տեղեկությունները ինչ-որ չափով օգտակար կարող են լինել Հունգարիայի անցյալ կյանքի մոռացված որոշ հարցեր լուսաբանելու և լրացնելու, ինչպես և բարեկամ այդ օրերի ու նրա ժողովրդի նկատմամբ հայ հասարակության մի շարք ներկայացուցիչների վերաբերմունքը ցույց տալու համար:

Հունգարիայում ստեղծված հայերեն ձեռագրերի հիշատակարաններում մեծ մասամբ խոսվում է դրանց ստեղծման հանգամանքների մասին. անպայման հիշատակվում են այն ժամանակ Հունգարիայում ու տվյալ վայրում իշխող անձինք, հոգևորականներ և այլն: Բերենք մի օրինակ. 1682 թ. Սեմիբլենոյում արտագրված Սաղմոսարանի հիշատակարանում, որն այժմ պահվում է Վիեննայի հայկական Մխիթարյան միաբանության գրադարանում, կարդում ենք հետևյալը.

«Արդ գրեցաւ եւ կատարեցաւ սաղմոս Դաւթի ի յերկիրն Մաճարաց ի գիւղաքաղաքն որ կոչի Սէմիբլէնոյ, ի հայրապետութեան Հայոց Տեառն Եղիազարին և եպիսկոպոսութեան տէր Մինասի և Մաճարաց գուլին Աբրաֆի Միհային եւ Պողոտանաց երկրին թագաւորին Տուգային...»²:

Վերոհիշյալ բնույթի հիշատակարաններից քիչ տարբերվում է 1647 թ. Հունգարիայի Վաշարհեյ քաղաքում գրված և այժմ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում 3519 համարի տակ պահվող ձեռագրի հիշատակարանը.

«Արդ գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՌՂԶ (1647) ի ամսեանն յուլիսի Ի (20), և աւարտեցաւ ի քաղաքըն Վաշարհէյ ի յերկիրն Մաճառաց և թագաւորն էրտէլիս Ռադօլցի ասի, որ մինչի աստ ժԼ (18) տարի էր, որ տիրութիւն կանէր յերկրին. և էր սա անուանի և խաղաղարար թագաւոր կացուցեալ էր ի կենդանութեան իւրում. մինչ զի կենգանի էր ինք էրտէլիս] և յետ իւրոյ նստելոց էր որդին»³:

Անշուշտ, հետաքրքրական է հայ հեղինակի համակրանքն արտահայտող խոսքը Տրանսիլվանիայի անկախության համար մարտնչած Դյերդ Ռակոցի Ի-ի մասին: Հիշատակարանում նա կոչվում է ոչ թե իշխան, այլ խաղաղարար ու անվանի թագավոր: Սակայն ճիշտ չէ նշված նրա իշխանության անցնելու թվականը. 1647 թ. լրանում էր նրա ընտրվելու 17 տարին, որովհետև նա իշխել է 1630 թ. մինչև 1648 թ.⁴:

Նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարանից երևում է, որ այն ժամանակ Հունգարիայում շատ դժվար է եղել լավ թուղթ ձեռք բերելը, ուստի և այդ գիրքն այնքան էլ լավ չի ստացվել⁵: Հետաքրքրական է մեկ այլ հիշատակարան, որն արտագրել է Մինաս Բժշկյանը Մոլդավիայում հայերի հիմնադրած Գրիգորիոսյոլ քաղաքում: Այնտեղ սղղակի հիշատակություն կա

² Յ ա կ ո վ բ ո ս Տ ա շ ե ա ն. Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 982:

³ Մաշտոցի անվ. Մատենադարան(այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 3519, էջ 360ա:

⁴ История Венгрии, т. I, М., 1971, с. 395—398.

⁵ Մատենադարան, ձեռ. № 3519, էջ 1բ:

Հունգարական Սիրվիզ (այժմ Ֆրոլմոսսա) քաղաքի վրա 1694 թ. թաթարների կատարած ավերիչ հարձակման մասին, որի ժամանակ թաթարները գերի են տարել նաև 148 հայերի⁶:

Դժբախտաբար, այդ բնույթի հիշատակարանների թիվը շատ փոքր է և մենք հնարավորություն չունենք հենվելու նաև դրանց պարունակած տեղեկությունների վրա: Այդ բացը լրացնում են արխիվային վավերագրերը: Անհրաժեշտ է նշել, որ փաստաթղթերում և սովորություն է եղել սկզբում հիշատակել ինչպես իշխող թագավորին, նահանգապետին, այնպես էլ հոգևոր առաջնորդներին, առաջին հերթին, իհարկե, Հռոմի պապին, եթե դրություն հեղինակները կաթոլիկներ էին, հայոց կաթողիկոսին և ուրիշներին: Եթե հիշատակարաններում այդ կարգի զրանցում անելն ամբողջովին կախված էր ձեռագիրն արտադրողի կամքից, որը կարող էր գրել նաև իր ազգականների անունները, ապա սլաշտոնական վավերագրերում գա արդեն պարտադիր էր:

Հունգարացիների վերաբերյալ XVIII դ. հայկական աղբյուրներում հնագույն վկայություններ դանում ենք Հակոբ Բուզազյանի (մահացած 1737 թ. Իելզարում) չափածո մի վիպասանության մեջ՝ նվիրված ավստրիացիների և թուրքերի միջև 1716 թ. ապրիլի 13-ին սկսված պատերազմին, որն ավարավեց մի քանի ամիս անց թուրքերի պարտությանը⁷: Նույն թվականի օգոստոսի 13-ին Պետերվարդում տեղի ունեցած ճակատամարտի մասին, որին մասնակցել են նաև Հունգարական ղինված ուժերը, Հակոբը տեղեկացել է ականատես մարդկանցից: Նա գրել է հոգնակի առաջին դեմքով՝ օսմանյան բանակի զինվորների անունից: Նրա չափածո պատմությունը, որի վերնագիրն է «Տաղաչափական վիպասանություն մարտի օսմանցոց ընդ ալամանաց, որ եղեւ յամի Տեառն 1716», գրված է հայերեն և թուրքերեն: Այն պահվում է Վիեննայի հայկական կաթոլիկ միաբանության մատենադարանի տաղարաններից մեկում (ձեռ. 160, էջ 251բ–271ա) և հրատարակվել է նույն միաբանության 1887 թ. մինչև հիմա հրատարակվող «Հանգէս ամսօրեայ» ամսագրում:

«Վիպասանություն» սկզբում թուրք զինվորների կողմից տեղեկություններ են տրվում ճակատամարտի ժամանակի մասին, երբ որ «Հատուկ վճիռ տալ պատերազմ դէմ նէմցին... Վասն այնորիկ անկաւ բանակ մեր յուղին»: Այնուհետև թվարկվում են թուրքական ուժերը, ինչպես և հակառակորդի զորքերը: Հատուկ շեշտվում է, որ հունգարացիները ևս մասնակցել են ճակատամարտին՝ թուրքերի հետ միասին⁸: Հետո տրվում է օսմանյան բանակի առաջխաղացման և ավստրիացիների հետ առաջին ընդհարումների նկարագրությունը: «Վիպասանություն» ավարտվում է թուրքական բանակի պարտության պատկերավոր նկարագրությամբ:

Հունգարիայի վերաբերյալ արժեքավոր և միանգամայն արժանահավատ տեղեկություններ կան Վենետիկի Մխիթարյան միաբանության մի քանի հոգևորականների նամակներում, որոնք բնակություն էին հաստատում

⁶ Մ Ե Ն Ա Ս Բ Ժ , Կ Ե Ա Ն . Ծանապարհորդություն ի Լեհաստան . Վենետիկ , 1830 , էջ 201 :

⁷ Հ . Հ ա կ ո բ Բ ու զ ա հ ե ա ն . Վիպասանություն մարտին օսմանցոց ընդ ալամանաց (1716) . – «Հանգէս ամսօրեայ» , 1956 , հունվար–փետրվար , էջ 87 :

⁸ Նույն տեղում , էջ 89 :

Հունգարիայում և այնտեղից նամակներ էին ուղարկում Վենետիկ՝ իրենց միաբանությունից ղեկավարությունը: Վենետիկի Մխիթարյանները եղիսաբեթուպուլիս քաղաքում դեռևս 1720 թ. եկեղեցի ու գրադարան ունեին, իսկ 1789–1790 թթ. այնտեղ հիմնադրվում է հայկական դպրոց:

Դժբախտաբար, շատ բան հայտնի չէ Հունգարիայում Վենետիկյան Մխիթարյանների գործունեության վերաբերյալ: Հունգարիայում եղած նրանց փաստաթղթերը տարբեր պատճառներով ոչնչացված են: Ենթադրվում է, որ այդ բանը տեղի պետք է ունեցած լինի 1848 թ. հեղափոխությունից: Բայց պահպանվել են Վենետիկ ուղարկած նրանց նամակները, որոնց մի մասը հրատարակված է: Այդ հոգևորականներից էր նաև Հունան Սեբաստացի եպիսկոպոսը, որը նշանակվելով Տրանսիլվանիայի հայոց եկեղեցու վերասեսուզ՝ 1720 թ. ամռանը մեկնում է Հունգարիա և հաստատվում Գեոլա հայաբնակ քաղաքում: 1720 թ. հուլիսի 10-ին Գեոլայից Վենետիկի Մխիթարյանների աբբազայր Մխիթար Սեբաստացուն ուղարկած նրա նամակից տեղեկանում ենք այն մասին, թե նա ինչպես է հասել Գեոլա: Այդ ուղևորությունը նկարագրությունը թույլ է տալիս ինչ-որ չափով պատկերացում կազմելու Հունգարիայի այն ժամանակվա ճանապարհների ու փոխադրամիջոցների վերաբերյալ: Մեկ այլ Մխիթարյան հոգևորական՝ Մանուել Խուսեֆյանը Եղիսաբեթուպուլսից 1734 թ. մայիսի 26-ին գրում է Վենետիկ՝ Մխիթար Սեբաստացուն՝ այն մասին, որ պատերազմի վտանգ է առաջացել և այդ պատճառով խուճապ է սկսվել իրենց քաղաքում: Քաղաքացիները ստիպված իրենց ունեցվածքը տեղափոխել են բերդ և այժմ ընկել են ծանր վիճակի մեջ:

Արևելյան Հունգարիայում, ինչպես և Կերեշ ու Մարաշ գետերի հովիտներում 1735 թ. ապրիլի 27-ին սկսվում է գյուղացիական ապստամբություն, որին մասնակցում էին հունգարացի ու վալախ գյուղացիները: Ապստամբները պահանջում էին վերացնել պետական հարկը և ֆեոդալների կողմից պարտագրվող գրամական ունեւան: Ապստամբությունը ճնշվեց 1735 թ. մայիսի 9-ին, իսկ նրա ղեկավարները մահապատժի ենթարկվեցին⁹: Այդ իրադարձությունների մասին որոշ տեղեկություններ կան 1735 թ. մայիսի 10-ին Բելգրադից Մանուել Խուսեֆյանի գրած նամակում, որը հասցեագրված է Մխիթար Սեբաստացուն: Նամակագիրը տեղեկություն է ստացել այն մասին, որ այդ թվականի մայիսի 2-ին կամ 3-ին մեծ թվով հեծյալ հունգարացիներ «որպես թէ ապստամբք կայսերն» մտնում են Գեոլա: Նամակից երևում է, որ այդ իրադարձությունների ժամանակ մեծ վնասներ են հասնում Գեոլայի բնակիչներին¹⁰: Բելգրադից 1735 թ. մայիսի 19-ին հ. Եղիայի ուղարկած նամակի մեջ ևս խոսվում է այդ ապստամբած հունգարացիների մասին: Նա գրում է, որ թագավորական զորքերին ի վերջո հաջողվում է ճնշել ապստամբությունը¹¹:

Հունգարիայի վերաբերյալ հատկապես ուշագրավ տեղեկություններ կարելի է գտնել Թեոդորոս Հովհաննիսյանի նամակներում, որը շարունակ շրջել է Հունգարիայի հայաբնակ վայրերում: Նրա նամակների մի մասը

⁹ История Венгрии, т. I, с. 413, 460–462.

¹⁰ Ղ. Տ ա յ ե ա ն. նշվ. աշխ., էջ 58:

¹¹ Նույն տեղում:

դրված է Եղիսաբեթուպոլսից (Պաշտպանություն), մյուս մասը՝ Գեուլայից: 1737 թ. նոյեմբերի 1-ին Պաշտպանության Մխիթար Աբրահամյանը գրած նամակի մեջ թ. Հովհաննիսյանը տեղեկություն է հաղորդում Հունգարիայում բռնկված ապստամբության մասին¹²: Հունգարիայում քաղաքական կյանքի հուզումնալից վիճակի մասին է վկայում 1737 թ. դեկտեմբերի 10-ին թ. Հովհաննիսյանի գրած մեկ այլ նամակը, որը հասցեագրված է Մխիթար Աբրահամյանին: Երևում է, որ այն ժամանակ դարձյալ պատերազմի վտանգ է առաջացել և ընակչությունը ահ ու սարսափի մեջ է եղել¹³: Վերոհիշյալ իրադարձությունների մասին լուրեր կան նաև Բելգրադից 1738 թ. մայիսի 31-ին Միքայել Աբրահամյանը ուղարկած նամակի մեջ: Այնտեղ նույնպես խոսվում է Ռադոցիի որդու գլխավորած ապստամբության մասին¹⁴:

1739 թ. հունվարի 3-ին Գեուլայից Մխիթար Աբրահամյանը ուղարկած նամակում թ. Հովհաննիսյանը գրել է Տրանսիլվանիայի վրա թուրքական հարձակման վտանգի մասին: Նա նշում է, որ հանկարծակի լուր է հասել թուրքերի Օրշովայից դուրս գալու մասին: Թուրքերը ստանում են ներխուժել Տրանսիլվանիա ընակչությանը թալանելու համար: Այդ հարձակման վտանգը Գեուլայի, ինչպես նաև, ամենայն հավանականությամբ, Տրանսիլվանիայի այլ քաղաքների ու գյուղերի բնակիչների մոտ մեծ խուճապ է առաջացնում: Գեուլացիներն սկսում են իրենց ունեցվածքը տեղափոխել Քլուժ, Բիստրիցա ու այլ վայրեր: Հետո տեղեկություն է հասնում այն մասին, որ կայսերական զորքը ետ է քշել թուրքերին: Այդ ժամանակ Հունգարիայում տարածվում է ժանտախտի համաճարակը: Թ. Հովհաննիսյանի նամակից իմանում ենք, որ Գեուլայի շրջապատի բնակավայրերում ևս տարածվում է այդ սոսկալի հիվանդությունը «և սկսան շուրջանակի մեռանել կարի սաստկաբար»¹⁵:

Տասն ամիս հետո նոյեմբերի 1-ին թ. Հովհաննիսյանի գրած մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ այն ժամանակ ժանտախտը գեուլա շարունակում էր մոլեգնել Հունգարիայում¹⁶: Ժանտախտի համաճարակը կրկին բռնկվում է Հունգարիայում հաջորդ 1740 թ.¹⁷: Նամակի վերջում հանդիպում ենք մեկ այլ հետաքրքրական տեղեկության. «Աստ թանկություն հացի է, և սիրոյ և միաբանութեան»¹⁸:

Հունգարիայում աննգամթերքների պակասության և թանկության մասին քիչ ավելի ընդարձակ տեղեկություններ կան թ. Հովհաննիսյանի 1740 թ. հոկտեմբերի 25-ին Մխիթար Աբրահամյանը գրած նամակում. «Աստ էն մեծ նուաղություն գոյ հացի և գինույ, ղի եղեամն և հեղեղ անձրևաց ապականեալք են զարտորայս և զայգիս»¹⁹: Նամակագրին որո-

¹² Նույն տեղում, էջ 70–71:

¹³ Նույն տեղում, էջ 294:

¹⁴ Նույն տեղում, էջ 77:

¹⁵ Նույն տեղում, էջ 80:

¹⁶ Նույն տեղում, էջ 86:

¹⁷ Նույն տեղում, էջ 92:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 93:

շակի ոչինչ հայտնի չէ երկրում խաղաղություն վերահաստատվելու վերաբերյալ²⁰:

1740 թ. դեկտեմբերի 4-ին թ. Հովհաննիսյանը Գեռլայից Վենետիկ է ուղարկում մի նոր նամակ, որի մեջ ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում բնական արհավիրքների ու դրանց անխուսափելի հետևանքների մասին: Երեք ամիս շարունակ «գրեթէ յամենայնում առուր անձրևեաց յառաւօտէ մինչև ցերեկոյ, և յերեկոյէ մինչև ցառաւոտ. և այսպէս հաշուա թէ փտեցեալ գետինն, և սլատառեցաւ երկիր»: Խզվում է երթևեկութիւնը բնակավայրերի միջև: Ի հետևանք այդ ամենի, Հունգարիայում կրկին թանկություն է ընկնում²¹:

Օտար տիրապետությունը, ֆեոդալական դաժան շահագործումն ու կեղեքումն անտանելի վիճակ էին ստեղծել Հունգար աշխատավորների համար, այդ ամենին միանում են բնական արհավիրքներն ու համաճարակները: Ժողովուրդն անընդհատ ձգտում էր թողնուիլ օտար լուծը: Այս մասին շատ կարճ, բայց հավաստի տեղեկություն կա Պաշտպանից Վենետիկ ուղարկած թ. Հովհաննիսյանի մեկ այլ նամակում՝ գրված 1741 թ. հոկտեմբերի 25-ին: Նա գրում է, որ տեղացի հայերը համոզված են, որ «մի գուցէ ապստամբիցի մաճառ աղղն»: Անցնում է 40 օր, թ. Հովհաննիսյանը մի նոր նամակ է դրում Վենետիկ, որտեղ կրկին շոշափվում է ապրուստի դժվարության հարցը: Պարզվում է, որ դարձյալ մթերքների թանկություն է և որ այդ վիճակը շարունակվում է արդեն երեք տարի: 1741 թ. կարկուտն ավերում է Տրանսիլվանիայի խաղաղի այգիները: Տեղումների բացակայության հետևանքով վտանգ է առաջանում նաև հաջորդ տարվա բերքի համար: Մի խոսքով, երկրում ստեղծվում է տնտեսական ծանր վիճակ, որին դարձյալ միանում է ժանտախտի համաճարակը²²:

1744 թ. մայիսի 14-ին Տրիեստից Հ. Թեոդորոս Մետիաչցին Մխիթար Սեբաստացուն, ի թիվս այլ լուրերի, հայտնում է նաև հետևյալը. «Թէ կամեցեալք են ոմանք թունաւորել զԹագուհին, ուրք և եղեալք են այլակերպեցեալք ի զգեստս մաճարականս, որպէս զի մի լինիցի կասկած գնոցանէ»²³: Խոսքը վերաբերում է Ավստրիայի Մարիա-Թերեզա կայսրուհու կյանքի դեմ կազմակերպված ինչ-որ դավադրության:

1745 թ. Հունգարական բնակավայրերը մեծապես տուժում են շլեզիական երկրորդ պատերազմի պատճառով: Երկրով մեկ սկսվում է զորածողով: Հունգարիայի հայերն էլ պատերազմի համար զինվորներ են տալիս: Ելիզավետոսլուսի քաղաքային վարչության փաստաթղթերից երևում է, որ հայերը պարտավոր են եղել նաև զգեստավորել հավաքադրված զինվորներին: Հետաքրքրական է այդ զգեստները թվարկումը, որը սահպանվել է տարեդրության մեջ: Բացի այդ, քաղաքի հայերը կայսրուհուն են ուղարկում 1200 ոսկի²⁴:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 94:

²² Նույն տեղում, էջ 99:

²³ Նույն տեղում, էջ 305:

²⁴ Գ. Գ ո վ ը ի կ ե ս ն. Հայք յեղիսաբեթուսլուսի Դրանսիլուանիոյ. Վիեննա, 1893, էջ 113-114:

Հենվելով Գեուլայի Հայ գաղութի քաղաքային վարչության դիվանատան նյութերի վրա՝ Հունդարահայ գաղութի պատմության ուսումնասիրող Գ. Գովրիկյանը Գեուլա Հայաքաղաքի պատմության մեջ «Հայաքաղաքի պատմությանը վերաբերեալ մասնական տեղեկություններ» բաժնում ժամանակագրական կարգով, շատ համառոտ ձևով, գրել է նաև այդ քաղաքի ու շրջակա վայրերի կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների մասին (մորեխների հարձակում, հրդեհներ, բանտարկյալների փախուստ բանտից, սուլ, ուժեղ ցրտեր, փոթորիկ, ջրհեղեղ, երաշտ և այլն)²⁵:

Հունդարիայի ու Հունդարացիների վերաբերյալ որոշ տեղեկություններ կան նաև Հունդարահայ գաղութներից մնացած պաշտոնական փաստաթղթերում: Ինչպես արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, այնպես էլ Հունդարիայում հաստատված հայերը հատուկ օրենքներով ու որոշումներով կարգավորել են իրենց համայնքների ներքին կյանքը: Ընդհանրապես, նրանք ձգտել են պահպանել իրենց ազգային սովորություններն ու ավանդույթյունները, ղեկավարվել են սեփական օրենքներով, բայց շրջապատը, այնուամենայնիվ, դրել է իր անջնջելի կնիքը նաև այդ սովորությունների վրա: Ինչ վերաբերում է համայնքների ներքին օրենքներին ու կենցաղավարության կանոններին, ապա ի սկզբանե հայերը ձգտել են հարմարվել և որևէ ձևով չչեղվել ընդունված օրենքներից, մինչև ի վերջո պայմանների ու ժամանակի ստիպմամբ ջնջվել են նաև էական տարբերությունները արևելքից եկած ու Հունդարիայում նոր հայրենիք գտած Հայ բնակչության ու տեղացիների միջև: Հունդարիայում հաստատված հայերի ներքին կյանքի այլևայլ կողմերը ղեկավարելու և կարգավորելու կոչված օրենքների ու կանոնների մեջ կատարված նորամուծություններն արդյունք են կյանքի նոր պայմանների և որոշակիության անընդարձնում են շրջապատի կյանքը, տեղացի, առաջին հերթին քաղաքաբնակ ժողովրդի մոտ ընդունված և սրբազործված ավանդույթներն ու սովորությունները, հետևապես սրանք կարող են օգտակար լինել հենց բուն Հունդարական սովորությունների ուսումնասիրման համար: Այդ կարգի նորամուծություններն առկա են ոչ միայն ինքնավարություն իրագործող մարմինների ընդունած որոշումներում ու կանոններում, այլև հասարակական մի շարք կազմակերպությունների՝ հոգևոր ու կտրիճվորաց եղբայրությունների և համքարությունների կանոնադրություններում:

Վերոհիշյալից բացի, Հայ համայնքներից պահպանված փաստաթղթերում արժեքավոր տեղեկություններ կան խնդրո առարկա ժամանակաշրջանում Հունդարիայի քաղաքներում մի շարք ապրանքների գների, պաշտոնական անձանց և հոգևորականների ուսման գների չափի, ճանապարհածախսի, գրամի կուրսի, տոկոսով գրամ տալու, ուսման վարձի և այլ հետաքրքրական հարցերի վերաբերյալ: Կարծում ենք, որ այդ նյութերի հրատարակումը օգտակար կարող է լինել Հունդարիայի քաղաքային կյանքի պատմությամբ ղբաղվող մասնագետների համար:

²⁵ Գ. Գ. ՈՎՐԻԿՅԱՆ. Դրանսիլուանիոյ Հայոց մետրոպոլիտը կամ նկարագիր Կերլահայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս. Վիեննա, 1896, էջ 177:

Այժմ անցնենք մեր հոգվածի սկզբում հիշատակված Ստեփաննոս Գյուլվեր Ագոնցի աշխատությունը: Ի տարբերություն մյուս հեղինակների, Ս. Գ. Ագոնցը ձգտել է ոչ միայն տեղեկություններ հաղորդել Հունգարիայի վերաբերյալ, այլև ամբողջական պատկերացում տալ այդ երկրի ինչպես աշխարհագրական պայմանների, այնպես էլ այնտեղ բնակվող ժողովուրդների կյանքի ու կենցաղի, բնակավայրերի, կարևոր հուշարձանների, պետական և եկեղեցական հիմնարկությունների մասին: Աշխատության մեջ տեղ է տրված նաև Հունգարիայի, ինչպես և Տրանսիլվանիայի պատմությունը: Ս. Ագոնցը առաջին հայ հեղինակն է, որ այդպիսի ընդարձակ աշխատություն է նվիրել Հունգարիային: Այդ պորձը զետեղված է 11 հատորից բաղկացած նրա «Աշխարհագրությունն չորրից մասանց աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկիոյ և Ամերիկոյ» աշխատության 4-րդ հատորի 2-րդ մասում: Այն լույս է ընծայվել Վենետիկում 1802 թ.:

Աշխատության առաջին մասում տեղեկություններ են տրվում Հունգարիայի սահմանների, կլիմայական պայմանների, դետերի ու լճերի, հանքային հանածոների, ինչպես և Հունգարիայի բնակչության մասին: Երկրորդ բաժնում տրված է առանձին շրջանների կարևոր ու ոչ կարևոր բնակավայրերը նկարագրությունը: Եթե առաջին մասը շարադրելիս Ագոնցն օգտվել է Հունգարիային ու նրա պատմությանը նվիրված գրականությունից, երկրորդ մասն արդյունք է նաև նրա անձնական հետազոտությունների: Բանն այն է, որ Վենետիկի հայկական Մխիթարյան միաբանության գլուխ անցած այդ գիտնականը ծնվել և շատ տարիներ ապրել է Հունգարիայում, տիրապետել է հունգարերեն լեզվին, շրջել նրա քաղաքներն ու գյուղերը, հետևապես նրա շարադրանքը լավատեղյակ ականատեսի ձեռքով գրված վստահելի սկզբնաղբյուր է: «Բարք Մաճառաց» վերնադիրը կրող ենթազլսում շարադրվածը արդյունք է հեղինակի անձնական դիտարկումների և գուտ մասնավոր տպավորությունների: Նա ձգտել է բնութագրել հունգարացիներին՝ նախապես նշելով, որ չի կամենում կանգ առնել Հունգարիայում բնակվող մյուս ժողովուրդների վրա:

Ահա թե ինչ է գրում Հունգարիայում ծնված, ապրած ու այդ երկրին քաջ ծանոթ մեր հեղինակը հունգարացիների մասին. «Բարեձև մարմնով, առոյգ անձն և քաջալանջ, փառասէր, մեծասիրտ, կորովի, յօժարամիտ ի դինոտորութիւն, և քաջ զօրականք, համարձակք և աներկիւղք ի պատերազմի. փոյթք և յաջողակք յուսմունս գիտութեանց, այլ ի գործ աշխատութեան գանգաղք և վեհերոտք. և ի կենակցութեան բիրտ մանաւանդ ռամիկ ժողովուրդն»²⁶:

Ինչպես տեսնում ենք, Ագոնցը շատ բարձր գնահատական է տալիս Հունգարացիներին: Զգացվում է նրա անկեղծ հարգանքը աշխատասեր և պատվասեր, իր ազգային արժանապատվությունը բարձր գասող և օտար լծից ազատագրվելու մշտապես ձգտող հունգար աշխատավորների նկատմամբ: Այնուհետև նա խոսում է հունգարական ազնվականության, նրա վայելած արտոնությունների և դրանց մի մասից զրկվելու մասին:

²⁶ Ս տ ե փ ա ն ո ս Գ ի ւ Վ է ր Ա գ ո ն ց. Աշխարհագրութիւնն չորրից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկիոյ և Ամերիկոյ, մասն երկրորդ. հ. 7, Վենետիկ, 1802, էջ 246:

Ներկա հոգևածի շրջանակներում անհնարին էր մանրամասն կանգ առնել այդ հարցերի վրա, ընդհանուր առմամբ օրինակներն էլ բավական են համոզվելու համար, որ Ա. Գ. Ադոնցի աշխատությունը կհետաքրքրի մեր հունգար գործընկերներին, և ընդհանրապես, Հունգարիայի պատմությանը հետաքրքրվողներին: Ուստի, կարծում ենք, պետք է անսպասելի իրականացնել այդ արժեքավոր գործի հունգարերեն թարգմանությունն ու չույս ընծայումը:

Եթե Ս. Գ. Ադոնցի գրքում հիշատակված ու նկարագրված են հունգարական հարյուրավոր քաղաքներ ու գյուղեր, վենետիկյան մեկ այլ հայ գիտնականի՝ Մինաս Բժշկյանի ուղեգրական նոթերում խոսվում է միայն այն վայրերի մասին, որտեղ գոյություն են ունեցել հայկական գաղութներ: Մ. Բժշկյանը այդ հարցերին նվիրել է «Ճանապարհորդությունն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» գրքի գլուխներից մեկը, որն ունի հետևյալ վերնագիրը. «Հայկազունք սերունդք Անույ բնակեալք ի Մաճառստան» (էջ 193–205): Նախապես ընդհանուր տեղեկություններ հաղորդելով Հունգարիայում հաստատված հայ բնակչության վերաբերյալ և նշելով նրանց թիվը (15 հազար), Բժշկյանն այնուհետև մեկ առ մեկ կանգ է առնում հայկական գաղութներ ունեցող հունգարական 15 քաղաքների վրա, դրում հայ բնակչության քանակական կազմի, նրանց զբաղմունքների, վայելած արտոնությունների, ինքնավարությունն իրագործող վարչական մարմինների, վերջիններիս ղեկավար կազմի ընարություն կարգի և այլ հարցերի մասին: Միաժամանակ նա որոշ տեղեկություններ է հաղորդում այդ բնակավայրերի վերաբերյալ: Մ. Բժշկյանը լակոնիկ ոճ ունի: Նա ձգտում է պատկերավոր ձևով նկարագրել իր տեսածը, անսպասելի գիտական հիմնավորում տալ իր եզրակացություններին: Նախապես ծանոթանալով հրապարակի վրա եղած սկզբնաղբյուրներին ու գրականությանը նա ուսումնասիրել է նաև տեղում եղած ձեռագրերն ու նյութական մշակույթի հուշարձանները, ուստի նրա ուղեգրությունը վստահելի սկզբնաղբյուրի արժեք ունի:

Ինչպես տեսնում ենք, XVIII դ. և XIX դ. սկզբների հայկական սկզբնաղբյուրները բավական հետաքրքրական տեղեկություններ են պարունակում հունգարական երկրի և հունգար ժողովրդի վերաբերյալ. այդ նյութերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստավոր կլինի Հունգարիայի կյանքում տեղի ունեցած մի շարք իրադարձությունների պատմությունը վեր հանելու, ինչպես և հունգարական մի քանի բնակավայրերի անցյալ կյանքի պատկերն ալելի հստակ ու որոշակի ներկայացնելու գործին:

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О ВЕНГРИИ И ВЕНГРАХ
(XVIII в. — I половина XIX в.)

ВАРДАН ГРИГОРЯН

Р е з ю м е

В армянских первоисточниках XVIII — XIX вв. есть много интересных данных о Венгрии и венграх. Всестороннее изучение этих материалов, будет способствовать выявлению ряда важных событий в жизни Венгрии, а также более четкому представлению о жизни некоторых венгерских городов и сел. Особый интерес представляют письма и докладные записки членов католической конгрегации венецианских армянских католиков — мхитариев, адресованные руководству конгрегации.